տալ մասնաւոր տներում և ժամանակ չունեն ազգին ծառայելու։ Բայց նրանք մոռանում են որ նոյն իսկ այն փոքրիկ պարապմունքը որ մենք նրանց առաջարկում ենք, բացի այն օգուտից որ նա կը տայ ազգին, կարող է նրանց տալ միջոց ապրելու։ Զքաւոր հայ ուսանողը ասում է թէ պէտք է դասեր տայ և ուրախ է երբ քաղաքի մի ծայրից միւս ծայրը վազելով ամիսը մի 30 ռուբլ կաշխատէ։ Իսկ մի՞թէ հայոց լրագիրներից քաղուածներ անելով և զետեղելով ռուս լրագիրների մէջ նոյն ուսանողը չէ կարող ամիս մի 30 կամ 40 ռուբլ աշխատել։ Մենք ճանաչում ենք անձինք Թիֆլիսում, որոնք միմիայն „Մշակից“ քաղուածներ անելով և տպել տալով այդ քաղուածները տեղական ռուս „Кавказъ“ լրագրում, ամիսը մինչև 40 ռուբլ էին վաստակում։ Իսկ „Кавказъ“ լրագիրը չունի այն նիւթական միջոցներ, որ ունեն մայրաքաղաքների ռուս լրագիրները, որոնք կարող են իւրաքանչիւր տպված տողին աւելի թանգ վճարել։

Եւ մի՞թէ այդ տեսակ պարապմունք աւելի հաճելի չէ՞, քան թէ մասնաւոր տներում դասեր տալու յոգնեցնող, սպանիչ պարապմունքը։

Բայց ի՞նչի այդ չեն անում մայրաքաղաքների չքաւոր հայ ուսանողները. որովհետև նրանց պակաս է ամեն բանի մէջ սեփական ինիցիատիվը և ամեն բան նրանց պէտք է բացատրել։

Նոյն սեփական ինիցիատիվից զուրկ, նրանք վերադառնում են իրանց երկիրը, այն գանգատութեամբ որ ուսում աւարտելուց յետոյ նրանք աւելի էլ ինքնհաւան են լինում,—որովհետև ուսումը աւարտել են։ Այնուհետև նրանց այլ ևս ոչինչ չէ կարելի ասել։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ռուս լրագիրներում կարդում ենք որ Թագաւոր Կայսրի Թագադրութիւնը, որ պէտք է կատարվէր եկող Թի մայիս ամսին, յետաձգված է։

—

Լրագիրները ասում են որ իշխան Գոնդուկով-Կորսակովի Կովկասեան կառավարչի նշանակվելը վերջացած բան է։

—

Ասում են որ գնդապետ Զէրնիաեվ նշանակվում է Տուրքէստանի զորքերի հրամանատարի օգնական։

—

ԳԻԼԻԶԱՆԻՑ մեզ գրում են։ «Այստեղ ձեր լրագիրը շատ քիչ օրինակներով է ստացվում, բայց ամենքը հետաքրքրվում են թէ ինչ է գրված «Մշակի» մէջ։ Տեղս ամենահարուստ մարդիկն անգամ, որոնց համար տարեկան 10 ռուբլ տալը ոչինչ չէ նշանակում, փոսոր ստանալուն պէս գնում են իրանց ծանօթների մօտ, խլում են նրանցից «Մշակի» համարները, այնպէս որ բաժանորդները դրեթէ մէջից էլ չունեն կարդալու իրանց ստացած թերթերը։ Մեր հարուստները իրանք մեծ հետաքրքրութեամբ կարդում են, բայց փող ծախսել չեն կամենում։ Իսկապէս չքաւորներն են պահպանում «Մշակը», իսկ եթէ բոլոր հայերը հարուստ լինէին, ոչ ոք չէր ստանայ հայ թերթը և չէր պահպանի նրա գոյութիւնը։ Հայը քանի հարուստ է դառնում, այնքան աւելի ժլատ է լինում, այնքան աւելի եսական և անտարբեր է դառնում դէպի ազգի ընդհանուր շահերը։»

—

Մեզ գրում են ԻԳԴԻՐԻՑ հետեւեալը։ «Այս տարի մեր երկրամասի գպրոցները շատ լաւ են զբաղում։ Ուսուցիչները եռանդով են պարապում իրանց առարկաներով։ Այստեղի հայ թաթարաներների խումբը դիտաւորութիւն ունի մի ներկայացում տալ։ Կը խաղան մի ողբերգութիւն և մի կատակերգութիւն։»

—

Իգդիրից մեզ հաղորդում են որ չը նայելով թէ Իգդիրը շրջապատող սարերի վրա ձիւն է եկել, բայց քաղաքում եղանակը տաք է և ցորտերը դեռ չեն սկսվել։

—

Մեզ գրում են ԱԽԱԼՑԻԽԱՑԻՑ որ այդտեղի դպրոցական և եկեղեցական կալուածների գործերը շատ անկարգ դրութեան մէջ են։ Եկեղեցիները քանդվում են, նրանցից մէջը փակվեց։ Եկեղեցական արդիւնքները անկարգութեան և այլ և այլ զեղծումների պատճառով օրից օր պակասում են։ Նոյնպէս վատ դրութեան մէջ են և այն կալուածները, որոնց արդիւնքներով պահվում են հայոց դպրոցները։ Եթէ հասարակութիւնը ինքն եռանդով ձեռք չառնի իր ազգային և եկեղեցական գործերի դեկը, աւելանում է մեր Թիֆակիցը, հետևանքը դպրոցների գոյութեան համար շատ վատ կարող է լինել։

—

Մենք իմացանք որ քանի մի շաբաթ է արդէն որ կարապետ Թէմուրազեանց հաստատվել է երեցփոխան Հալաբարի Էջմիածնեցոց եկեղեցու։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ԽՆԴԻՐ

—

Վերջին թղթաբերով եկած եւրոպական լրագրաց մէջ կը կարդամք թէ Անգլիոյ արտաքին գործոց նախարար լորդ Գրէնվիլ ծանուցեր է տերութեանց թէ քիչ օրէն դարձեալ իրենց ուշադրութիւնը պիտի հրաւիրէ հայկական խնդրոյն վրա, և այն միջոցաց վրա, զորս պէտք է ի գործ դնել Փքր-Ասիոյ քրիստոնեայ և իսլամ ժողովրդոց վիճակը բաւոքելու համար։ Վերջին «կապոյտ Ցետրակէն» քաղելով, արդէն մեր ընթերցողաց ներկայացած ենք այն կարևոր բանակցութիւնները, զորս տարբոյս սկիզբը լորդ Գրէնվիլ ունեցած էր միւս մեծ պետութեանց հետ, վերաբերմամբ 61-երդ յօդուածի խնդրոյն, և այն պատասխանները, զորս անոնցմէ իւրաքանչիւրը տուած էր Անգլիոյ կառավարութեանը այս ձեռնարկին։ Կը թվի թէ յայտնի եղած առարկութիւնք այժմ ոչ ևս տեղի ունենալով, լորդ Գրէնվիլ պատշաճ համարած է կրկնել իւր առաջարկն, որոյ արդեանց վրա մէկ նրանք չը լսում են ցեղերները։ Այն գործարաններում, ուր այդ նաֆթոտ տախտակները էլ չը կան, մշակները գիշերները քնում են հողայատակի վրա, որ միշտ չափազանց խոնաւ է լինում գործարանները ծովի ափից մօտ լինելու պատճառով, այնպէս որ շատ տեղերում երկու երեք արշին խորութեանում գետնից ծովի ջուրը դուրս գալիս։ Թէ որքան ՀԱՍԱՐԱԿ է մարդու առողջութեան համար մի այդպիսի խոնաւութիւն—այդ կարող է խմանալ ամենատգնը մեզանից։ Ցօղացաւութիւն, ոսկրացաւութիւն, զեղնացաւ (желтуха) կատարը տամբոխ, որ շատ ժամանակ փոխվում են թոքախտութեան—ահա խոնաւութեան հետևանքները։ Նա մանաւանդ մշակները տանջվում են գանգատ ցաւերով այս խոնաւ բնակարաններում ձմեռը, ցրտերից։ Վառարաններ շատ քիչ բնակարաններում կան, իսկ մեծ մասամբ մշակները ձմեռը տաքացնում են իրանց բնակարանները մանգալով *)։ Բայց առաւել լաւ կը լինի եթէ նրանք ձմեռը բնավին կրակ չը վառեն իրանց բնակարաններում, որովհետև նրա ծուխը խոնաւ պատերի մէջից դուրս գալով տաքութիւնը, օդը լքցնում է նեխեալ գազերներով սատակացնելով այդպիսով նրա գարշահոտութիւնը։

***

Անուշադիր թողնվելու չէ և այն հանգամանքը, որ շատ քիչ գործարաններում են հայ մշակները պարսիկ մշակներից առանձին ապրում, իսկ մեծ մասամբ այդ երկու տարրերը միշտ միասին, մի սենեակում են կենում։ Պարսկաստանից եկող մշակներից շատերը իրանց հետ բերում են զանազան սեռական հիւանդութիւններ, մեծ մասամբ սիֆիլիս անուանված վարակիչ ախտը։ Շատ հասկանալի է, որ այդ ախտաւորները ապրանք տալու համար—այնքան փոքր է, որի մէջից ներս թափանցող օդը հազիւ թէ բաւական նեռթիւն անի մի մարդու առողջ շնչառութեան համար, ուր մնաց այն 10 կամ 15 խեղճերի համար, որոնք զետեղված բնակվում են այստեղ, որոնց շնչառութիւնից օդը ապականվելով և չը նորոգվելով անսովոր մարդուն մի սարսափելի գարշահոտութիւն է փչում, երբ նա ոտ է դընում այստեղ։ Աւելացրու սրա վրա և մշակների դէպի իրանց սեպական առողջութիւնը ուշեցած անհոգութիւնը, օրը, պակաս չէ նպաստում նրանց վիճակի զառնութեան։ Մշակը շատ ժամանակ իր ունեցածով անգամ չէ օգտվում, նա իր բնակարանը հազիւ թէ ամսական մի քանի անգամ սրբում է, նա այդ փոքրիկ պատուհանը դժուար թէ տարիներով բացում է գէթ փոքր ի շատ բնակարանի օդը թարմացնելու համար։ Բայց գիտէք ինչից է առաջ գալի մշակի այդ թուլութիւնը, առաջին՝ նրա յուսահատութիւնից, երկրորդ, անհասկացողութիւնից և երրորդ, որ ամենագլխաւորն է, սովորութիւնից։ Մշակը յիրաւի նոր վերադարձած զիւղական առողջ կլիմայի տակից, երբ առաջին անգամ մտնում է այստեղ, նա զգում է օդի ապականութիւնը, նրա գարշելի հոտը, բայց մի յայտնի ժամանակ ապրելով այդ օդում, նա փոքր առ փոքր ընտելանում է և նա այնուհետև էլ անտարբերանում է դէպի իր բնակարանի անմաքրութիւնը և թէ նրա օդի ապականութիւնը։ Սակայն հարկաւոր չէ անշուշտ բժիշկ լինել, որ խմանալ թէ, իր կեանքի համար ինչ թանգ գնով է ձեռք բերում անմաքուր օդում բնակվելու սովորութիւնը։ Ահա այդ մասին ինչ է ասում յայտնի Լուիսը։ «Մենք տեսնում ենք թէ ինչպէս անմաքուր բնակարանների ապականված օդում սովոր են հեշտութիւնով և իբր թէ անվնաս ապրել զանազան խեղճեր առանց զգալու այդ ապականութիւնը, մինչդեռ մեզանից ամեն մէկը երբ ոտ է դնում այստեղ, խիստ զգում է թէ օդը փչացած է, բայց որովհետև մենք ևս յետոյ փոքր առ փոքր սովորում ենք նրան, այնուհետև մեզ էլ թվում է թէ սբրանից վնասակար հետևանքներ չեն առաջանում։ Ահա ինչումն է կայանում մեր մոլորութիւնը։ Մենք բաւականանում ենք ապականված օդով—որովհետև սովորում ենք նրա պայմաններին։ Բայց գիտէք, ինչ գնով, ինչ մէջտեղներով ենք մենք ձեռք բերում այդ պայմաններին ընտելանալու կարելիութիւնը։ Մեր օրգանիզմի բոլոր մնացեալ մասերի և զգայարանքների թուլանալով, որը մեզ համար առաջացնում է թթուածնի համեմատաբար պակաս քանակութեան ներշնչելը։ Փչացած օդը բաւական է միայն հիւանդ օրգանիզմ ունեցող մարդուն, ինչպէս և նրանով բաւականանում են սանձարիւն կենդանիները։ Երբ մենք մտնում ենք ապականված մթնոլորտի մէջ, մեր շնչառութիւնը դժուարանում է և այդ պատճառով թուլանում են և մեր զգայարանքները, որից յետոյ կրկին մեր շնչառութիւնը թեթևանալով, աւելի թթուածնի կարօտութիւն չենք զգում և այստեղ արտադրում ենք ածխային թթուի համեմատաբար շատ պակաս քանակութիւն քան թէ մաքուր օդի մէջ։ Ուստից այդ սովորութեան, այսինքն առանց մեր օրգանիզմի բոլոր կենսական վարչութիւնի թուլանալու, մեզ համար անկարելի կը լինէր չարունակաբար մնալ այդ ապականված մթնոլորտի մէջ *)։»

Ահա մի գեղեցիկ պատասխան այն կարճամիտ և քարասիրտ բուրժուաներին, որոնք միշտ երբ ես խօսք եմ ունեցել նրանց հետ գործարաններում բանվորների բնակարանների մասին, չեն ամաչել յայտնել այն եղերական միտքը, թէ մշակը առողջ բնակարան կարօտութիւն չունի, թէ նա սովորել է իր կեանքը անցկացնել խոնաւ և կեղտոտ պաղվաներում։ Բայց թողնենք այդ։

Ինչպէս ասացինք այս 4 սաժէն երկարութիւն, 2 սաժէն լայնութիւն և 5 կամ 6 ֆուտ բարձրութիւն ունեցող խուցի մէջ զետեղված են 10—15 մշակներ։ Եթէ այդ թէրը բաղապատակերը միմեանց վրա, մենք կը ստանանք 2,352 խորանարդ ֆուտ օդի պարունակութիւն։ Բաւական է արդեօք օդի այդ չնչին քանակութիւնը, եթէ ոչ 15 գոնէ 10 մարդու ապրուստի համար, որոնք այստեղ զետեղված են...—հազար անգամ ոչ։ Եթէ զանազան փորձառու բժիշկների—Գուբերի, Զէնֆուլերէնի, Բէկքամի և ուրիշ երեսի հեղինակների գրութեան համեմատ—ընդունենք թէ մի լաւագոյն մարդուն անհրաժեշտ է ունենալ 400-ից—մինչև 800 խորանարդ ֆուտ օդի տարածութիւն փոքր ի շատ առողջ բնակութեան համար—ուրեմն 10 մարդու համար գոնէ մի՞թէ թուով կարօտ է 6,000 խ. ֆ.։ Այս տեղից կարող ես, ընթերցող, եզրակացնել թէ որքան կործանիչ ներգործութիւն կարող է ունենալ 2,352 խ. ֆ. օդի չնչին տարածութիւնը մի տասնեակ թշուառների կազմվածքի վրա նա և այն ժամանակ, եթէ այդ օդը լինէր մաքուր, բայց նա, ինչպէս վերն ասացինք, մաքուր չէ։ Կան և այնպիսի գործարաններ, ուր մշակների բնակարանները առաւել անձուկ են, ինչպէս մի թուրքի գործարանում ես գտայ մի գեռնափոր խրճիթ, որի երկարութիւնը 16 ֆ., լայնութիւնը 8 ֆ., իսկ բարձրութիւնը $5^1/_2$ ֆ. էր, այստեղ բնակվում էին 6 մշակներ։

Շատ գործարաններում, մշակների բնակարաններում չը կան մահճակալներ, իսկ եթէ կան էլ, այդ մի քանի նաֆթոտ տախտակներ են միմեանց կողմում շարած և մի քանի կեղտոտ և պատռտված փախիներով ծածկված, որոնք մի և նոյն ժամանակ մշակներին ծառայում են և անկողնի տեղ, իսկ դիշերները վերմակի փոխարէն նրանց ծառայում են այն միակ ցնցոտիները, որոնց մէջ նրանք չը լսում են ցեղեկները։ Այն գործարաններում, ուր այդ նաֆթոտ տախտակներն էլ չը կան, մշակները գիշերները քնում են հողայատակի վրա, որ միշտ չափազանց խոնաւ է լինում գործարանները ծովի ափից մօտ լինելու պատճառով, այնպէս որ շատ տեղերում երկու երեք արշին խորութեանում գետնից ծովի ջուրը դուրս գալիս։ Թէ որքան ՀԱՍԱՐԱԿ է մարդու առողջութեան համար մի այդպիսի խոնաւութիւն—այդ կարող է խմանալ ամենատգնը մեզանից։ Ցօղացաւութիւն, ոսկրացաւութիւն, զեղնացաւ (желтуха) կատարը տամբոխ, որ շատ ժամանակ փոխվում են թոքախտութեան—ահա խոնաւութեան հետևանքները։ Նա մանաւանդ մշակները տանջվում են գանգատ ցաւերով այս խոնաւ բնակարաններում ձմեռը, ցրտերից։ Վառարաններ շատ քիչ բնակարաններում կան, իսկ մեծ մասամբ մշակները ձմեռը տաքացնում են իրանց բնակարանները մանգալով *)։ Բայց առաւել լաւ կը լինի եթէ նրանք ձմեռը բնավին կրակ չը վառեն իրանց բնակարաններում, որովհետև նրա ծուխը խոնաւ պատերի մէջից դուրս գալով տաքութիւնը, օդը լքցնում է նեխեալ գազերներով սատակացնելով այդպիսով նրա գարշահոտութիւնը։

***

Անուշադիր թողնվելու չէ և այն հանգամանքը, որ շատ քիչ գործարաններում են հայ մշակները պարսիկ մշակներից առանձին ապրում, իսկ մեծ մասամբ այդ երկու տարրերը միշտ միասին, մի սենեակում են կենում։ Պարսկաստանից եկող մշակներից շատերը իրանց հետ բերում են զանազան սեռական հիւանդութիւններ, մեծ մասամբ սիֆիլիս անուանված վարակիչ ախտը։ Շատ հասկանալի է, որ այդ ախտաւորները ապ-

*) Տես. Михайловъ, Ассоціаціи. երես 45։ ծ. յ.

*) Մանգալ կաւից չինած մի տեսակ ասիական անօթ է, որի մէջում վառում են ածուխ կամ տաշեղ ասիական սեռերում։ Գ. Ե.

ռավարութիւնը պահանջում էր 85,000 մարկ առանձին անտեսական խորհուրդ կազմելու և նրան պահելու համար։ Այդ առիթով պատգամաւոր Բինդի ասաց, որ ինքը և իր կուսակցութիւնը պատրաստ են ընդունել յիշեալ ծախսերը այն պայմանով միայն, որ յիշեալ խորհուրդը մշտական օրգանական հիմնարկութիւն չը դառնայ։ Այդ ծախսերը կարող են մեծացվել ոչ քաղաքական պատճառներով և ոչ նրա համար, որ անտեսական խորհրդի ազդեցութիւնը պարլամենտի ազդեցութենից մեծ կը լինի, այլ այն պատճառով, որ, ինչպես փորձը ցոյց է տուել, այդպիսի խորհրդակցական հիմնարկութիւնները որամադրված են լինում մեծացնել իրանց հեղինակութիւնը։ Իշխան Բիսմարկ ասաց հետևեալը։ „Կառավարութիւնը այս դէպքում գործում է առանց կողմնակի մտադրութիւնների։ Նա միայն պէտք ունի գործնական խորհուրդների, որոնց կարող է տալ անտեսական խորհուրդը։ Ներկայումս կառավարչական առաջարկութիւնները գլխաւորապես հիմնված են լինում այս կամ այն միխարութեան մասնագիտական բաժինների տեղեկութիւնների վրա։ Կառավարութիւնը կամենում է, որ առաջարկված միջոցը անպատճառ ընդունվի և անդարձ նրան կառաջարկի մինչև նրա ընդունվելը։ Եթէ բոյլստագը նրան կը մերժէ, կառավարութիւնը մի ազգարարութեամբ կը դիմէ ժողովրդին և միացեալ կառավարութիւններին։ Կառավարութիւնը կը հրաւիրէ նրանց ուղարկել իրանց հաւատարմատարներին գերմանական անտեսական խորհուրդ կազմելու համար։ Այսպես թէ այնպես կառավարութիւնը անդարձ կը վերանորոգէ իր պահանջը բոյլստագին։“ Բամբերգեր նկատեց, որ հարցը փոքր մէջ չէ, այլ անտեսական խորհրդի ձևին է վերաբերում։ Նա կասկածում է, որ կառավարութիւնը կամենում է խորհուրդը պարլամենտի հակակշիռը դարձնել։ Ֆրանսիայի մէջ գիւղատնտեսական խորհուրդը պատցուցեց, որ նա կառավարութեան գործիք է։ Այդ խորհուրդը այնպես է կազմակերպված, որ կառավարութիւնը նրա հետ կարողանում է ամէն բան անել։ Ցտեսական խորհուրդը կանցլերի խորհրդատուի դերը կը կատարէ, բայց մի այնպիսի խորհրդատուի, որ չի համաձայնվի այլ կարծիք ունենալ, բացի պետական կանցլերի կարծիքից։ Հետաքրքրված կողմերը չեն կարող դատաւորներ լինել, նրանք միայն վկաներ կարող են լինել։ Գործի հետ ծանօթ մարդկերանց այդպիսի խորհուրդ կազմելով, գուցէ կը խլեն բոյլստագից գործին ծանօթ անձանց և միակողմանի խորհուրդ կը կազմեն։ Բիսմարկ նրան պատասխանեց. „Մենք կամենում ենք վկաներ և կառավարութեան օգնականներ ստեղծել և ոչ թէ դատաւորներ։ Պարլամենտը անկարող է ունենալ մասնագիտական այն տեղեկութիւնները, որոնց կարող է ունենալ անտեսական խորհուրդը։ Բոյլստագը միայն քննում է և ուղղում է օրինագիծները, իսկ խորհուրդը նրանց կը նախապատրաստէ։ Բոյլստագը կարող է հանգիստ մնալ։ Նրա համար մտցութիւն չէ պատրաստվում։ Այդպիսի մանրակրկիտ նախանձ մինչև այժմ ոչ մի պարլամենտ չէ ցոյց տուել։ Օտարոտի բան է տեսնել, թէ ինչպես պետական կանցլերը պաղատում է միջոցներ տալ իրան հարկաւոր տեղեկութիւնները հաւաքելու համար։ Կարծես թէ բոյլստագը դրանով կամենում է կառավարութեանը ասել. „Ի՞նչ կանեք տեղեկութիւններ։ Դուք առանց այդ տեղեկութիւնների էլ մեզ համար բաւական խնդիր էք։ Մենք չենք կամենում, որ դուք մեզանից շատ տեղեկութիւններ ուզենաք։ Դրա համար մենք ոչ մի կոպէկ չենք տայ։“ Հասկանալի է, որ անտեսական խորհուրդը կառավարութենից կը կազմվի։ Նա պէտք է ամէն տեղից հաւաքէ տեղեկութիւններ ունեցող անձանց։ Բայց մենք չենք էլ երեւակայել նրանց դատաւորներ դարձնել։ Ի՞նչ հարկաւոր են մեզ դատաւորներ, քանի որ նրանք աշխարհի վրա առանց այդ էլ շատ են։ Մեզ իւրաքանչիւր դէպքի համար մասնագիտական քննող յանձնաժողովներ են առաջարկում։ Բայց այդ գործը աւելի դժուար է, որովհետև իւրաքանչիւր անգամ պէտք է նոր մարդկի փնտռել և իւրաքանչիւր անգամ փոխել նրանց տեղեկութիւնները։ Բամբերգեր կարծում է, որ մենք խորհրդի մէջ իսկական ճշմարտութիւն չենք գտնի։ Բայց ո՞րտեղ է նա և ո՞վ կարող է որոշել, թէ նա ի՞նչ է նշանակում։ Ես նրան չեմ էլ փնտռում այնպես, ինչպես հասկանում է Բամբերգեր։ Ես միայն միջոց եմ փնտռում գործերի մասին իրականապես դատելու համար։ Հաւանաբաներից մէկը նկատեց, որ շատ տարիների ընթացքում շատ բան ես չը կարողացայ սովորել։ Բայց ես իմ գիտութիւնները միջին չափից բարձր էլ չեմ դասում։ Միայն եթէ շատ տարիների ընթացքում կարելի է շատ բան չը սովորել, ուրեմն երեք տարիների ընթացքում աւելի էլ քիչ կարելի է սովորել։ Իսկ ձեզանից, պարոններ, շատերը երեք տարիներից աւելի սովորել են։ Մէկ աւելորդ տարին էլ ինձ իրաւունք է տալիս դառնա այնքան տեղեակ լինելու, որքան ձեզանից շատերը։ Զը կարծէք, որ ձեր համաքաղաքացիների ընտրելը դառնալով, դուք իմաստութիւն էք ստանում, կամ թէ չէ դուք ներկայացնում էք պարլամենտին ձեզ ընտրող բոլոր 10.000 խելքերը։ Հաւատացէք, որ դուք ինձանից շատ չէք հասկանում։ Համեստ լինենք դուք էլ, ես էլ։ Հաւատացէք, որ մենք ամենքս էլ դեռ շատ բան պէտք է սովորենք։ Իսկ ես պ. Բամբերգեր իրան և իր կուսակցութեանը այնքան բարձր է դասում, որ կարողանայ ասել կառավարութեանը. „Մենք ամէն բան գիտենք թէ բոյլստագի և թէ կառավարութեան համար։ Նա ուրիշներից սովորելու իրաւունք չունի։ Այնուհետև Բիսմարկ աւելացրեց, որ այդ ծախսերի մերժելը պարլամենտական քաղաքավարութեան հակառակ կը լինի։“ Այնուհետև առաջարկութիւնը քուէարկվեցաւ և մերժվեցաւ 169 ձայների մեծամասնութեամբ 83-ի դէմ։ Առաջարկութեան դէմ քուէարկեցին ազատամիտ բոլոր կուսակցութիւնները, դեմոկրատները, սոցիալիստները և կենտրօնական կուսակցութեան մեծ մասը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ֆրանսիական ազգային ժողովի նիստի ժամանակ, որի մէջ քննվում էր Ֆուլիսի պատերազմը շարունակելու խնդիրը, Գամբետտա մի ճառ ասեց, որ ունեցաւ մեծ աջողութիւն։ Գամբետտայի մինիստրութեան առաջարկութիւնը ստացաւ 400 ձայների մեծամասնութիւնը 53 ձայների դէմ։

—Գերմանական բոյլստագը շարունակում է քննել բիւդժէտը։ Գաղթականութիւնը վերանայելու ծախսերի յոդուածը ընդունելու ժամանակ պատգամաւոր Կնապպ ասեց որ գերմանցի գաղթականները նախապատրաստում են լաւ հանգամանքներում ապրել օտար երկրում, Ամերիկայում, քան թէ վատ հանգամանքներում իրանց հայրենիքում։ Պատգամաւոր Ֆրոմէ նկատեց որ սոցիալիստների դէմ բացառական օրէնքները չատ նպաստեցին բանւորների գաղթականութեանը։ Մակս Հիրշ նկատեց որ Ամերիկայում հարկերը չեն ծանրանում կենսական պիտոյքների վրա և զինուորական պարտաւորութիւնը աւելի աննշան է, քան թէ Գերմանիայում։ Բիսմարք բացատրեց որ ոչ թէ միայն ծը-խախտի վրա ակնկալի բարձրանալը, բայց և ծախսոտի արդիւնաբերութեան գործի անհատատատ լինելը վնասակար ներգործութիւն է ունեցել տարեկան բանւորներին, որոնք այդ գործով պարապում էին, անպէտ խմբերում գաղթել։ Բարեսերտ գերմանացին էլ, աւելացրեց Բիսմարք, կարող է վերջապէս համբերութիւնը կորցնել։ Այդ խօսքերին արիստոկրատ և պահպանողական կուսակցութեանը պատկանող ֆոն-Մենդիգերոդէ պատասխանեց. «Այս, և բարեսիրտ գերմանացին կարող է համբերութիւնը կորցնել լսելով անդարձ պ. Բիսմարքի մի և նոյն գատողութիւնները։ Բիսմարք դիմելով պ. Մենդիգերոդէին բացականչեց. «Հաւատացէք այնքան մարդիկ է նստած դրանը, որ նրան շատ հեշտ է դուրս գալ, եթէ չէ կամենում ինձ լսել։» Այդ խօսքերին հետևեց ծիծաղ, ազմուկ և բողոքներ։

—Պահպանողական կուսակցութեանը պատկանող գերմանական լրագիրները վրդովված են Բիսմարքի յանդգնութենից, որով նա արիստոկրատ Մենդիգերոդէին պարլամենտի դուռը ցոյց տուեց։ Ընդհանրապես ազատամիտ լրագիրները գովում են Բիսմարքի քաջութիւնը և նրա եռանդը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՏՔԱԳՈՒԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 դեկտեմբերի։ „Новое Время“ լրագիրը հաղորդում է. Մրզվինսկի, Տեզլեվ և Ֆուլսով մտադիր են բոլորքել բարձր դատարանին։ Ցրիգոնիի գործը կը քննվի սենատի առանձին բաժնում դատական ներկայացուցիչների մասնակցութեամբ յունվարի կէսին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 դեկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 30 կ., երկրորդ 90 ր. 87 կ., երրորդ 90 ր. 5 կ., չորրորդ 90 ր. 87 կ., հինգերորդ 90 ր. 75 կ., նեռքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 223 ր. 25 կ., երկրորդ 216 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 5 կ., երկրորդ 90 ր. 62 կ., երրորդ 90 ր. 5 կ., ոսկի 7 ր. 77 կ.։ Ռուսաց 1 բուլ Լօնդոնի վրա արժէ 25,40 պէնս, Ամստերդամի վրա 128,62 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 217 մարկ 25 պֆ., Փարիզի վրա 268 Ֆրանկ։ Բօրսայի արտադրութիւնը ամուր է։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ռելով ուրիշ առողջ մշակների հետ միասին, մի տեղ, հեշտութեամբ վերափոխում են սրանց վրա այդ գարշելի ցաւը։ Ես շատ ժամանակ, երբ տեսել եմ հայ մշակին այդ ախտով վարակված զարմացել եմ և չեմ կարողացել ինքս ինձ հաշիւ տալ, թէ ինչպես, ո՞րտեղ է գտել նա այդ ցաւը. միթէ անբարոյական տեղերում, բայց որտեղից նրան այդպիսի մի չաղլութեան համար միջոցներ, երբ նա հազիւ հաց կարողանում է իր գլուխը պահել մի կտոր չոր հացով։ Հարցը բացատրել են ինձ իրանք մշակները, պարզմտօրէն խոստովանելով իրանց անմեղութիւնը այդ բանում։

Բացի ֆիզիքական ախտերից Պարսկաստանից եկող մշակները բերում են իրանց հետ և բազմատեսակ բարոյական ախտեր, որոնցից նոյնպես ազատ չէ կուսակրոնաւոր ապրող հայ մշակը. Դուք կը զարմանաք տեսնելով, թէ Շամախու կամ Ղարաբաղի գաւառների խոզերից եկած մի որ և իցէ անմեղ, պարզմտա գիւղացին, որ հազիւ թէ իր կեանքում անբարոյական միջոցների դիմած լինի, մի կամ երկու ամսում այստեղ այնպէս լրջանում, անբարոյականանում է, որ նրա համար չատ ժամանակ սոդոմական յանցանքը անգամ սովորական բան է դառնում։ Բայց պէտք է նկատած, որ այդչափ անբարոյականանում են հայ մշակներից միայն անչափահասները. այսինքն նրանք, որոնք դեռ պատանեկան հասակի մէջ են, որոնց բնական խելքը դեռ իր հասունութեան չէ հասած, և այդ պատճառով նրանք չատ հեշտութեամբ են ենթարկվում շրջապատող հանգամանքների ազդեցութեանը, իսկ ինչ վերաբերվում է չափահասներին և տարիքը լրացածներին, սրանք անխախտ պահում են գիւղական անմեղութիւնը առաքինի և միամիտ կենցաղավարութեան հետ միասին։ Երիտասարդ մշակներից մի քանիսը հեռու չեն նոյնպես ուրիշ անբարոյական բաներից ինչպէս՝ արբեցողութենից, գողութենից, միմեանց դէմ թշնամական դաւեր լարելուց, չաղալ և աննպատակ փողեր չաղալելուց և այլն։ Վերջին յատկութիւնը նա մանաւանդ տարածված է նրանց մէջ։ Պատահում է, որ այն մշակը, որ անական 10 կամ 12 ր. առնչիկ ունէ, շատ ժամանակ տեսնում ես տան և ուրիշ հանդիսաւոր օրերին կռաքերի և սրանց նման չաղալ բաների վրա վատնեց իր մի անվայ դառն քրտինքով ձեռք բերած բուբլիները։ Այդպէս անում են ի հարկէ նրանք, որոնք ընտանեաներ չեն, իսկ նրանք, որոնց ընտանիքները և զաւակները հեռու հայրենիքում սպասում են օգնութեան, ինչպէս ասում են իրանց բերանից կորում են, մի կտոր ան հացով, մի բաժակ սառը ջրով են անցկացնում իրանց օրերը, թէ ինչ է հայրենիքը վերադառնալու ժամանակ սև երես չը անում իրանց մասը գաւակների առաջ։ Բայց այն սև կոպէկներն էլ, որ մշակի մի քանի տարվայ դառն աշխատանքի գինն է, շատ ժամանակ նրա ընկերների գողութեան զոհ են դառնում և նա ստիպված է լինում այնուհետև մի քանի տարիներ էլ աւել պանդխտութեան մէջ դեգերվելով նորից աշխատել այդ կոպէկները։ Ինչպէս ես անցեալ տարի տեսայ մի հայ մշակ, որի երեք տարվայ աշխատանքի գումարը 75 ր. գողացել էր նրա պարտիկ ընկերակիցը և այդ էլ այն ժամանակ, երբ նա մտադիր էր միւս օրը վերադառնալ այդ փոքրով իր հայրենիքը։ Թեղեմարը յուսահատութենից ծեծում էր իր գլուխը, լիքում էր անխիղճ պարսիկի ոտերը աղաչելով նրան, որ գոնէ գողացած մի մասը վերադարձնէ իրան, բայց խորամանկ համշարին յանձն չէր առնում իր գողութիւնը։

Սակայն պարսիկ մշակների գողութեան և աւազակութեան վրա զարմանալ չէ կարելի, քանի որում այդ նրանց առանձնայատկութիւններն են։ Նրանց մեծամասնութիւնը տարութիւն է դուրս գալիս հէնց իր այդ վայրենի կրքերը գործ դնելու նպատակով, ուստի ճանապարհով ապրուստի միջոց գտնելը նրա համար երկրորդական բան է։ Ապացոյց ձեզ Ղուբայի աւազակները, որոնց մեծամասնութիւնը գաղմում են Պարսկաստանից գաղթած համշարիները։

Բայց ինչին վերաբերել երևաստարդ հայ մշակների այդ բարոյական ախտերի գողութեան, չաղալութեան և ուրիշ յանցանքների պատճառը, արդեօք նրանց թոյլ բնաւորութեան, թէ նրանց տնտեսական դառն վիճակին, յուսահատ դրութեան, շրջապատող հանգամանքների ազդեցութեան։ Կասկած չը կայ, որ վերջիններին։ Հայ մշակը, ինչպէս և մի ուրիշ անհատ, որքան որ ու

, որքան որ ուգէտ լինի, երբէք նա չի յօժարվի, որ իր ճակատին դրոշմվեն գող, չարաստան, աւազակ և ուրիշ սրանց նման զզուելի տերմիններ, նա երբէք չի յօժարվի, որ իր անունը կեղտոտվի ընկերակիցների և հասարակութեան առաջ, նա նոյնպես, ինչպէս ուրիշները, ունի ինքնասիրութիւն։ Հայ մշակը գողանում է, որովհետև նրան ստիպում է քաղցածութիւնը. նա երբէք այդ չի անի, եթէ այսօր նրա փորը կուշտ է, նա գողանում է, որովհետև նրա աչքի առաջ պատում են վատ օրինակներ։ Հայ մշակը իր մի անվայ քրտինքով ապրուստ ստացող կոպէկները, ինչպէս վերև ասացինք, մի օրվայ մէջ վատնում, փչացնում է, որովհետև երկար ժամանակ ֆիզիկապէս աշխատելով, նրա ընութիւնը մի օր վերջապէս պահանջում է աշխարհային լիութիւն ու բարեկանութիւն և նա թիսկ է անում լրացնել այդ անհրաժեշտութիւնը։ Բայց աւաղ, մի օրվայ, մի ժամվայ բաւականութիւնը նրա մի օրվայ, մի ժամվայ բաւականութիւնը չատ թանգ է նստում նրա կեանքի համար։ Թեթևացրու փորը ի չատէ նրա ֆիզիքական ծանր աշխատանքները, տուր նրան խտակ ընակարան, մաքուր օդ, առողջ և անդարար կերակուրներ և դու կը տեսնես, թէ նա ինչպէս կանոնաւոր և վայելուչ կեանք է վարում։ Բայց թողնենք այդ և դառնանք նրա դրութեան ուրիշ կողմերին։

(Կը շարունակվի)

կառավարութեան համար։ Նա ուրիշներից սովորելու իրաւունք չունի։ Այնուհետև Բիսմարկ աւելացրեց, որ այդ ծախսերի մերժելը պարլամենտական քաղաքավարութեան հակառակ կը լինի։“ Այնուհետև առաջարկութիւնը քուէարկվեցաւ և մերժվեցաւ 169 ձայների մեծամասնութեամբ 83-ի դէմ։ Առաջարկութեան դէմ քուէարկեցին ազատամիտ բոլոր կուսակցութիւնները, դեմոկրատները, սոցիալիստները և կենտրօնական կուսակցութեան մեծ մասը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ֆրանսիական ազգային ժողովի նիստի ժամանակ, որի մէջ քննվում էր Ֆուլիսի պատերազմը շարունակելու խնդիրը, Գամբետտա մի ճառ ասեց, որ ունեցաւ մեծ աջողութիւն։ Գամբետտայի մինիստրութեան առաջարկութիւնը ստացաւ 400 ձայների մեծամասնութիւնը 53 ձայների դէմ։

—Գերմանական բոյլստագը շարունակում է քննել բիւդժէտը։ Գաղթականութիւնը վերանայելու ծախսերի յոդուածը ընդունելու ժամանակ պատգամաւոր Կնապպ ասեց որ գերմանցի գաղթականները նախապատրաստում են լաւ հանգամանքներում ապրել օտար երկրում, Ամերիկայում, քան թէ վատ հանգամանքներում իրանց հայրենիքում։ Պատգամաւոր Ֆրոմէ նկատեց որ սոցիալիստների դէմ բացառական օրէնքները չատ նպաստեցին բանւորների գաղթականութեանը։ Մակս Հիրշ նկատեց որ Ամերիկայում հարկերը չեն ծանրանում կենսական պիտոյքների վրա և զինուորական պարտաւորութիւնը աւելի աննշան է, քան թէ Գերմանիայում։ Բիսմարք բացատրեց որ ոչ թէ միայն ծը-խախտի վրա ակնկալի բարձրանալը, բայց և ծախսոտի արդիւնաբերութեան գործի անհատատատ լինելը վնասակար ներգործութիւն է ունեցել տարեկան բանւորներին, որոնք այդ գործով պարապում էին, անպէտ խմբերում գաղթել։ Բարեսերտ գերմանացին էլ, աւելացրեց Բիսմարք, կարող է վերջապէս համբերութիւնը կորցնել։ Այդ խօսքերին արիստոկրատ և պահպանողական կուսակցութեանը պատկանող ֆոն-Մենդիգերոդէ պատասխանեց. «Այս, և բարեսիրտ գերմանացին կարող է համբերութիւնը կորցնել լսելով անդարձ պ. Բիսմարքի մի և նոյն գատողութիւնները։ Բիսմարք դիմելով պ. Մենդիգերոդէին բացականչեց. «Հաւատացէք այնքան մարդիկ է նստած դրանը, որ նրան շատ հեշտ է դուրս գալ, եթէ չէ կամենում ինձ լսել։» Այդ խօսքերին հետևեց ծիծաղ, ազմուկ և բողոքներ։

—Պահպանողական կուսակցութեանը պատկանող գերմանական լրագիրները վրդովված են Բիսմարքի յանդգնութենից, որով նա արիստոկրատ Մենդիգերոդէին պարլամենտի դուռը ցոյց տուեց։ Ընդհանրապես ազատամիտ լրագիրները գովում են Բիսմարքի քաջութիւնը և նրա եռանդը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՏՔԱԳՈՒԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 դեկտեմբերի։ „Новое Время“ լրագիրը հաղորդում է. Մրզվինսկի, Տեզլեվ և Ֆուլսով մտադիր են բոլորքել բարձր դատարանին։ Ցրիգոնիի գործը կը քննվի սենատի առանձին բաժնում դատական ներկայացուցիչների մասնակցութեամբ յունվարի կէսին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 դեկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 30 կ., երկրորդ 90 ր. 87 կ., երրորդ 90 ր. 5 կ., չորրորդ 90 ր. 87 կ., հինգերորդ 90 ր. 75 կ., նեռքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 223 ր. 25 կ., երկրորդ 216 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 5 կ., երկրորդ 90 ր. 62 կ., երրորդ 90 ր. 5 կ., ոսկի 7 ր. 77 կ.։ Ռուսաց 1 բուլ Լօնդոնի վրա արժէ 25,40 պէնս, Ամստերդամի վրա 128,62 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 217 մարկ 25 պֆ., Փարիզի վրա 268 Ֆրանկ։ Բօրսայի արտադրութիւնը ամուր է։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ